



«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Taxpayers Rights Protection» Public Organization

ք. Երևան, 21.04.16 թ.
Ելք № 022

«ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Հայտնում ենք Ձեզ, որ Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիան դեռևս 2014 թվականի դեկտեմբերի 12-ին թիվ 127 գրությամբ դիմել էր ՀՀ ֆինանսների նախարարություն՝ 2012 թվականի դեկտեմբերի 19-ին ընդունված «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ՀՕ-238-Ն օրենքի կիրարկման ընթացքում հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման հետ կապված մի շարք հարցերի մասով պարզաբանումներ տրամադրելու խնդրանքով: Սակայն, մեր ունեցած տեղեկությունների համաձայն նշված գրության պատասխանն ասոցիացիան դեռ չի ստացել:

Հաշվի առնելով այն, որ նշված գրությամբ ներկայացվող հարցադրումներն էական են կազմակերպությունների կողմից հարկային պարտավորությունների հաշվարկման տեսանկյունից և այն, որ նշված հարցերում անորոշությունները ստուգումների ընթացքում կարող են տարբեր մեկնաբանությունների պատճառ հանդիսանալ, խնդրում ենք հայտնել վերը նշված գրության պատասխանի հնարավոր ժամկետների մասին:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան